ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿԱՐԳԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզալյանի, Երվանդ Վարոսյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Նիկոլայ Բաղդասարյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով «Փաստաբանի օգնականի արտոնագրման մասին» կարգը **(այսուհետ՝ Կարգ)** նոր խմբագրությամբ հաստատելու մասին հարցը,

նկատի ունենալով այն, որ Պալատի նախագահը ներկայացրել է Կարգի նախագիծը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, 23-րդ հոդվածի 2-րդ և 9-րդ մասերի պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- ***Նոր խմբագրությամբ հաստատել «Փաստաբանի օգնականի արտոնագրման մասին» կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:***
- ***Հաստատել փաստաբանի օգնականի արտոնագրի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:***
- ***Հաստատել փաստաբանի օգնականի վկայականի ձևը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

17 հունիսի 2014թ.
թիվ 17/12-Լ
ք.Երևան